

թացքում մենք վերադարձվում էինք, տեսնելով թէ ինչպէս հայ ազգի վրա թափվում էին մէկը միւսից հեշտաւոր մեղադրանքներ, իսկ հայերը լուռ ու մունջ էին մնում: Լաւ է ուշ-քան երբէք: Գոնէ այժմ հասկացվել է թէ որ-քան հուրկաւոր են մշտական էջեր, որտեղից հալածված, անպատշաճ հայ ազգը կարող է իր սրտի հեծեծանքները լսեցնել հասարակու-թեան: Դրա բարերար հետեւանքները երևում են այժմից իսկ: Հրէշաւոր կարծիքները, նա-խապաշարմունքները փարատվել են սկսում: Բարեացակամ մասնուր փաստերից կազմված յեռակէսներ է գտնում մեր դատը պաշտպա-նելու համար. «ԲԵՐԵ» լրագիրը իր խմբագրա-կան յօդուածի մէջ առ այժմ շեշտում է մի շատ բնորոշ, նշանակելի հանգամանք: Ստաց-ված նամակներից շատ քչերի մէջ է արեւնա-հեղուկեան պատասխանատուութիւնը ամենից առաջ թուրքերի վրա գցվում:

«Վճռականագէտ տիրապետող մեծամասնու-թիւնը—ասում է լրագիրը—այն էլ հասունա-ցած մարդիկ, հասարակական գործիչներ, փաստաբաններ, ինժեներներ և այլն, զգալով հանգիստ այն կիզիչ ցաւը և սարսափը, որ պատճառում են մահմեդականների անօրինակ դադանութիւնները, վերաբերվում են թուր-քերին առանց անհաշտ շարութեան և մի քանի զէպքերում նոյն իսկ չեն արտայայտում նրանց դէմ մեղադրանքներ:

«Արեւոք պարզ է ընթերցողի համար, թէ ինչ է դա նշանակում: Կոտորվող հայ ժողո-վրդի ինտելիգենցիայի լաւագոյն ներկայա-ցուցիչները արգարացնում են թուրքերին, ցոյց տալով նրանց հանրաժանօթ հոգեբանութիւնը և բարքերը, որոնց շնորհիւ միայն մի Դուբայի գաւառում տեղական իշխանութիւնները ամեն տարի անդամահատում են 250—300 դիակներ այն թուրքերի, որոնք կոտորվում են իրանց ընտանեկան վէճերի մէջ: Փետրվարեան սպա-նութիւնների անպատիժ մնալը և բացարձակ անտարբերութիւնը, եթէ ոչ համակրանքը դէպի այդ սպանութիւնները աղմկիստար-ցիկայի կողմից, մահաւանդ այն հանգա-մանը, որ ոստիկանութիւնը օգտվեց թուրք հրոսակներից բանտրեանքի խաղաղացնելու համար,—ահա այն եղելութիւնները, որոնք միանգամայն բաւական էին, որ բորբո-քեն տեղական մահմեդականների մութ ամբոխի ամենից յայտնի ինտելիկաները և առաջ բերեն զգուշիւ դադանութիւնները, առանց շահերի խոր օրգանական հակասու-թիւն գոյութիւն ունենալու: Մեր հայ թղթա-կիցներին մեծամասնութիւնը դրականագէտ բացատրում է լուրջ կրօնական, անտեսական և պատմական թշնամութեան գոյութիւնը մահ-մեդականների և հայերի մէջ: Մի խօսքով բո-լոր սարսափների մէջ մեղադրում են ոչ թէ թուրքերը և ոչ թէ մահմեդականութիւնը, որոնք այլ ուստաց բերօքկատիայի մեղքերը:

Մենք միակողմանիութիւն ենք գտնում այն եզրակացութեան մէջ: Յոյց տուած հանգա-մանը պատճառներից մէկն է, դուցէ ամենա-մեծը, բայց ոչ թէ բոլոր պատճառների պատ-ճառը: Կարծում ենք, որ այս միակողմանիու-թիւնը կը փարատվի, երբ աւելի շատ մար-դիկ կը խօսեն, աւելի շատ դիտողութիւններ կը մտնեն հարցի մէջ: Անդուստ կան ու-րիշ երևոյթներ, ուրիշ գործօններ էլ, որ-շոք դեր են կատարել և կատարում են շարժման մէջ: Այն, շարժման—այս չը պէտք է մոռանալ. կովկասեան արեւմտեղ դրաման արդէն շատ փաստերով ապացուցել է, որ բա-ղաբական արեւմտեղը բոլորովին խորթ է նա մահմեդականներին շարժման: Ուր պարզնկատ-վում է յայտնի դատաւարները, յայտնի կազ-մակերպութիւնները ազդեցութեամբ, յայտնի դե-կալաբութիւն, դրօշակ, այնտեղ մեծ միա-մտութիւն կը լինէր ամեն ինչ բացատրել ամ-բոխի կոյր, գաղանակաւ հակումներով: Ընդ հակառակն, այդ հակումները արեւոք պատ-րաստ այրեցիչ իշխութիւն չեն պրօպագանդայի ձեռքում: Պէտք է լաւ դիտել երևոյթը, պէտք է բոլոր փաստերը ուշադրութեամբ առնել: Հարցի մի կողմը արդէն պարզված վերջացած է—աղմկիստարցիկայի վերաբերմունքը: Պէտք է առաջ գնալ, պէտք է դժուարին բարդ ե-րևոյթի ուրիշ կողմերն էլ լրջութեամբ լուսա-բանել:

Սպասելով այդ բազմակողմանիութեան, մենք առ այժմ գոհութեամբ ենք արձանագրում, որ ուստ լրագրի հայ թղթակիցները մեծ եռան-դով սկսել են ջանքերն հայերի «պատաս-բական», «հակառուսական» միտումների լե-զենները, որոնք այսպիսի ստատալական յամառութեամբ հայակերները ստորում և առ-բաժնում էին Ռուսաստանի մէջ և որոնք այ-

սօրվայ մեր դժբախտութեան գլխաւոր աղբիւ-րներն են: Վաղուց հարկաւոր էր: Վաղուց հա-րկաւոր էր ցոյց տալ թէ ինչ են եղել և իրա-պէս ինչ են ուստ բերօքկատիայի ձեռքում հայակերութեան այսպիսի հատու դէպք դա-ձած «կոմիտեաները»:

Այս կողմից «ԲԵՐԵ»-ի մէջ տպված նամակ-ներից ուշագրաւ է պ. Յովհաննիսեանի գրու-թիւնը: Ջրուտ, ազդու, բողոքող մի գրութիւն: Բայց բաւական է նա: Մենք համոզված ենք, որ իբրեւ լրագրական յօդուած, նա աւելի քան համապատասխանում է իր կոչման: Շանթի հայակեր մեծուրի ամբողջ խայտառակ անբա-րեխճութիւնը, ասել թէ ինչ յիշար բարբառ-շանք է «Մեծ Հայաստանի» մասին կազմված հէքիթը, որ ամեն անգամ դուրս է քաշվում իբրեւ խրատիւրակ՝ միամիտներին խաբելու և վախեցնելու համար, ասել թէ «կոմիտեաներ» իսկական նպատակն ու ձգտումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Բիւրլինի դաշնադրութեան 61 յօ-դուածի իրագործումը պետութիւնների աշխ-ցութեամբ—այս բոլորը շատ լաւ, շատ սի-րուն: Բայց չը պիտի մոռանանք, որ մեր խօսքին, այնուամենայնիւ, նայում են իբրեւ հայակական աղբիւրի, այսինքն—ինչո՞ւ թագ-նիւլ—արատաւորված կողմի: Կը հաւատանք մեզ, կը հաւատանք այն չափով, ինչպէս պէտք է, ինչի վրա մենք կատարեալ իրաւունք ունենք: Ռուս հասարակութեան լաւագոյն մասի զգա-յունները մասին ոչ մի կապած չենք կարող ունենալ: Բայց—չմեր տեսնում մեր շուրջը—կայ և մոլորվածների մի անազնի բազմու-թիւն: Պէտք է համոզել անտարբերներին, նախապաշարվածներին: Իսկ համոզել կարելի է փաստերով, վաւերագրերով: Մեր անցեալի և ներկայի մէջ շատ կան այդպիսի վաւերա-գրեր: Հարկաւոր են անվերջ, հարկաւոր են լրագրական աղբիւրի գեղեցիկ, կրակոտ յօ-դուածները. բայց հարկաւոր են և վաւերագրեր հրապարակ հանել, հարկաւոր են պատմական փաստերի լուրջ ու ազդու լեզուով էլ խօսել...

Պ. Ս. Յովհաննիսեանի յօդուածը դեռ շա-րունակելի է: Համանման ուժեղ, ազդու է նը-րան հետևող յօդուածը, որի տակ զբված է «Հայ» ստորագրութիւնը: Մենք կը բերենք այստեղից մի կտոր, որի մէջ խորհրդի հեշտ հասկացված իրականութիւնն է խօսում:

«Կրքերի հրդեհով բռնկված երկրը փափա-զում է այժմ միայն մի բանի. արդարացի, անկողմնապահ վերաբերմունք դէպի ամենը անխտիր, օրէնքի խիստ գործադրութիւնը նրան խանգարողներին վերաբերմամբ, առանց խտրութեան ազգութեան և ներքին համոզ-մունքների: Հազիւ թէ անհրաժեշտութիւն լինի կրկնելու այն բաշխուկ ճշմարտութիւնը թէ խօսել մէկի հետ կարելի է միայն նրան հասկանալի լեզուով: Կովկասի կիսաւայրերի ֆանատիկուս, հոգու խորքից ջրիտոնէու-թիւնը և քրիստոնէական կուռտորան ա-տող ցեղերը սովորել են յարգել միայն այն իշխանութիւնը, որ խիստ և արագ պատժում է ամեն մի ապօրինութիւն, ամեն մի յանցանք, կարգի ամեն մի խախտում: Իսկ մասների միջով նսեղներ, ազգերի մէջ պատակաւ մեր-միւրեւ թաղաքականութիւնը այն նպատակով, որ այդպիսով հեշտութեամբ միմեանց ջնջել տալ և պատրաստել երկրը ուստ գաղթական-նութեան համար (իշխան Լօբանով-Բոստովս-կու հոշակաւոր խօսքերը՝ «Հայաստանը մեզ հարկաւոր է առանց հայերի»), կարող է շատ անակնկալ հետեւանքներ հասցնել: Եթէ ուս-տաց պետութեան բարօրութիւնը պահանջում է ոչնչացնել մի ամբողջ ազգութիւն Կովկա-սում, թող այդ խիստ դատաւիճիւր հայերի վրա արտադրեն ոչ թէ այժմեան վարչական կա-րգը, որ ջնջում և քարոզեանք է ամուսն բոլոր հայերին որպէս զի արմատախիլ անէ ձեռք չընկնող «կոմիտեաները և գաղտնի կազմա-կերպութիւնները», ուրիշ խօսքով՝ այրում է տունը մկներին ոչնչացնելու համար, այլ ին-քը ուստ ժողովուրդը յանձին այն Պետական Դոմային, որի գումարումը հետու չէ»:

ՀԱՅԵՐԻ ԹԷ ԹՈՒՐԻՔԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Երեկ մենք առաջ բերինք, քաղելով «ԲԱԿՍ» լրագրից, թուրքական «Հայեթ» լրագրի յօ-դուածը հայ-թուրքական ընդհարման պատ-ճառների մասին: Ինչպէս տեսնել, «Հայեթ»-ը տակ է մի ամբողջ ծրագրի, որ իբր մշակել են հայերը, որի նպատակն է նախ ջնջել մուսուլմաններին, ապա ապստամբել նրանց և համարում հակառակորդին տապալե-լու համար և իրանց մշակած ծրագիրը փա-ճակով: «ԲԱԿՍ» լրագիրը իր կողմից հետեւալն է գը-րում.

«Ծրագրի կը լինէր առարկել այդ հէքիա-

թային—նախկ զառանցանքին, այդ անպատ-կառ ստութեան և շարադրութեան դէմ, որ տակն ու վրա է անում բոլոր մեր գաղափար-ները, որոնք կազմվել էին հայկական ազա-տարար շարժման մասին մեր ունեցած բազ-մամեայ, խիստ ստուգված անձնական դիտո-ղութիւնների և պաշտօնական ու անպաշտօ-նական փաստերի ծանօթութեան հիման վրա: «Հետաքրքիր կը լինէր տեսնել պ. Աղայիվի կողմից գտնէ մի հատ ցուցմունք այն աղբիւ-րի, որտեղից նա քաղել է այդ առասպելա-կան տեղեկութիւնները:

«Մենք հաւատացած ենք, որ այդպիսի աղ-բիւրներ ոչ որ ցոյց չի տալ, ոչ միայն Աղա-յիվը, որովհետեւ ինչ կան դրանք, այլ և նրա համար, որ «Հայեթ» վերնում բերված բաղուածը յօդին է պ. Աղայիվը այն միայ-նակ նպատակով, որի համար փետրվարի կո-տորածից առաջ պրօփագանդները և խուր-դանները տարածում էին մուսուլմանական խաւար մասսաների մէջ այսպիսի գրգռիչ հէ-քիթ, թէ իբր «հայերը կամենում են ունե-նալ իրանց համար թագաւոր»:

«Բայց մենք անգոր ենք կուռել «Հայեթի» գրգռման դէմ, որովհետեւ մուսուլմանները չեն կարողում մեր լրագիրը: Ուստի մենք դիմում ենք մուսուլման աղբիւր ինտելիգենցիային, խնդրելով հակադիւր գտնել նոր կոտորած ա-ռաջ բերելու գրգռող հայեթիցներին դէմ: Մենք առաջարկում ենք միջնորդ դատարան Բազմում ապրող բոլոր ազգերի ինտելիգեն-ցիայի ներկայացուցիչներին, լուծելու համար այն հարցը, թէ ճիշդ է արդե՞ք որ հայերը կամենում են բաժանվել Ռուսաս-տանից և ունենալ իրանց թագաւորը, թէ դա «Հայեթի» Կրօնականական երևակայու-թեան պտուղն է:

«Մի և նոյն ժամանակ մենք առաջարկում ենք նոյն միջնորդ դատարանի վճռին հետեւալ հարցը. արդե՞ք «Հայեթում» շարադրված և հայերին վերագրված գործողութեան ծրագի-րը չէ կազմում մուսուլմանական այն շարժ-ման ծրագիրը, որ արծարծել և զեկավարում են հայեթիցները: Այդպէս մտածել մեզ ստիպում է յօդուածների մի ամբողջ շարք «Հայեթից» և, ի թիւս այլոց, հետեւեալ տո-ղերը № 12-ից.

«Մեր ապագան ապահովելու համար—ա-սում է թուրքական լրագիրը մեզ հարկա-ւորութիւն չը կայ կուռել այժմեան ընթիմի դէմ այդ արդէն արել են ուրիշները և ար-դէն բաւականաչափ թոյն են թափել ներ-կայ կառավարութեան օրգանիզմի մէջ նրա լուծման համար: Մեր կողմից աւելորդ կը լինի որ և է ուրիշ բան աւելացնել ներկայ կառավարութեան ոչնչացման համար: Բայց կառավարութեան ոչնչացման համար մեզ մեզ պէտք է պատրաստվել կուռի ապագայ (սահմանադրական) կառավարութեան դէմ: Ապագայում մեր ազգին մեծ վտանգ է սպառնում. այդ վտանգաւ վտանգը արդէն մօտ է և մեր առաջ կայ կուռ մեզ սպառ-նացող վտանգի դէմ... Մեզ ամենից առաջ պէտք է ունենանք կազմակերպված ոյժ: Ուրիշ երբ չը կայ»:

Այդ տողերի միտքը հակաանալու համար, առաջ ենք բերում մի ուրիշ քաղուած նոյն լրագրից.

«Հնաւարտութիւն կայ ի մի ձուլել—ա-սում է «Հայեթ» լրագիրը № 12-ի մէջ (էջ 3, սխալակ 4, տող 20)—Փորք և Միջին Ա-սիայի ժողովուրդները և ցեղերը: Բացի դրանից Ռուսաստանի ամբողջ ազգաբնա-կութեան մի հինգերորդ մասը—մահմեդա-կաններ են: Թիւրքիան, Պարսկաստան, գուրգ-նան Աղայիստանը բնակաւ իրաւունք ունեն Ռուսաստանի վրա»:

«Նրա դէմ կարող ենք առ այժմ այս ա-սել. որքան մեզ յայտնի է, ոչ հայերը, ոչ վրացիները այդպիսի հայեթիցներ չունեն, ու-րովհետեւ նրանց իրեալները ոչ թիւրքի յուսմ-նի, ոչ Պարսկաստանում, ևս առուել ոչ Աւ-դանիստանում: Վերանորոգված, բարոյապէս—հոր Ռուսաստանը իր հարաւային երկրնե-րի վերանորոգութեան հետ միասին իրաւուն-քի և քաղաքական ազատութեան հողի վրա—անա այն իրեալները, որոնցով համակված են և հայերը և վրացիները: Երկուսի պահանջն ևս տեղական ինքնավարութիւնն է»:

Մենք մեր կողմից կարող էինք «Հայեթի» մէջ տպված բազմաթիւ յօդուածների թարգ-մանութիւնն առաջ բերել, որոնց մէջ Աղայիվի ընդհանր արշաւում են աւելի և աւելի ֆա-նատիկոսացնել մուսուլմաններին: Բայց արժէ-նաւոր խօսել մարդկանց հետ, որոնք ամեն միջոց ներքին են համարում հակառակորդին տապալե-լու համար և իրանց մշակած ծրագիրը փա-ճակով:

«Ծրագրի կը լինէր առարկել այդ հէքիա-

ԽՕՍԵՆԻ ԱՆԿԵԼՇՕՐԷՆ

Ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է, «Իշխան» լրագրի խմբագրութիւնը, իր խմբ-ագրի՝ գովա. Արդուլաւ Զէվլէթ բէյի ստո-րագրութեամբ մի կոչ էր ուղղել Կովկասի մահմեդականներին: Այդ կոչը անմիջապէս ներկայացրին մեր հասարակութեան, որով-հետեւ նա բերում էր խաղաղութեան և եղբայ-րութեան խօսքը:

«ԴՊՖԱ. ԱԵՈ»-ի ծանօթ աշխատակիցը՝ «Սան-գադէ», «Մշակից» քաղելով նոյն կոչը ներկայացրեց ուստ լրագրի ընթերցողներին: Այժմ «Հայեթ» լրագիրը՝ իր 68-րդ համա-րում, «Ինչ են գրում» վերնագրի տակ ա-սում է.

«Կովկասում, հայ կարծիքի թարգման լրա-գիրներից մէկի, «ԴՊՖԱ. ԱԵՈՅԵ»-ի սեպտ. 13 թուակեր համարում, «Սան-գադէ» ստորա-գրող մի աշխատակից, «Երիտասարդ-Թիւր-քերը և Կովկասի դէպքերը» տիտղոսով մի յօդուած է գրել: Այդ յօդուածում խօսում է ժընէվում «Իշխան» հանդէսը հրատարակող գրագէտ, բանաստեղծ դիտոր Արդուլաւ Զէվ-լէթի, և վերջերս, մի գրքոյի ձևով՝ «Կով-կասի մահմեդականներին» ուղղած նրա կոչի մասին: Յարգելի «Սան-գադէ», կամ «ԴՊՖԱ. ԱԵՈ»-ը և կամ աւելի ճիշդ հայերը՝ գովում, գովաբանում են իրանց մասին վերին աստիճանի բարեացակամութեամբ գրված և մահմեդականներին հաշտութեան և խաղաղու-թեան հրաւերող քաղաք ու խրատներից բաղ-կացած այդ կոչը և նրա հեղինակին, և այդ առիթով գոհունակութիւն են յայտնում:

«Մենք չը կարողացանք հասկանալ, թէ ին-չու համար մի թուրք, մի մահմեդական Ար-դուլաւ Զէվլէթի փոխարէն, հայերը օտար երկրներում, հէնց նոյն ժընէվում երեսուն, բաւասուն Արդուլաւ Զէվլէթներ ունենալով հանդերձ՝ նրանցից և ոչ մէկը, մեզ չափ, դու-ցէ և մեզանից աւելի քաղող ու խրատի կա-րօտ եղող հայերին՝ վերջոյեւալ կոչի նման մի կոչ չուղղեց «Կովկասի հայերին», և մեզ չու-րախացրեց... Եթէ ուղղողներ եղել են, խնդ-րում ենք «ԴՊՖԱ. ԱԵՈՅԵ»-ներին, «Մշակ»-ներին, որ մեզ յայտնեն և մենք մեր լրա-գրում մեր ձեռքից եկած գովիւնս ու գովա-բանութիւնը կարգանք հայ Արդուլաւ Զէվ-լէթներին հասցէին... Մեզ թւում է, որ Ար-դուլաւ Զէվլէթների նման ջանասէր անձերի համար բաւական չէ հետուից յորդորներ և խրատներ կարգաւ: Մենք կը ցանկանանք, որ նրանք շնորհ բերեն այստեղ և գործերը իրանց աշխով տեսնելուց յետոյ միայն մեր մէջ խրատ-ներ կարգան, որքան ներում է իրանց ճառա-խօսութեան, պիւրախօսութեան կարողութիւ-նը... Սակայն յարգելի Սանատուրիները այդ դէպքում չը պիտի շարունակեն արեւօք ի-րանց մի և նոյն ուղղութիւնը և խոյս պիտի տան արեւօք «քաղաքական կամ մեծիւմեծա-կան գրգռումներ»-ի նման խելից, մաքից դուրս գտնազան մեղադրանքներ ու ամբաս-տանութիւններ բարդուց մեզ վրա, երբ Ար-դուլաւ Զէվլէթները ոտը կիսին մեր հողը... «Ո՛վ Արդուլաւներ, կամ նմաններ, եթէ վա-խենում էք ոտանիք ձեր անձնօթ աշխարհը, ուր գնացողը էլ չի վերադառնալ» և ուր ու-ղարկվից Մէնզէլ Դուլին (Կէնէլէրիսկու մա-սին է խօսքը), զգուշացէք այս տեղերը ոտը կոխելուց...»

«Հայեթ»-ը մի քանի օր է, որ իր գրգռիչ լեզուն փոխելով՝ սկսել է հաշտութեան, համե-րաշխութեան, իրար հասկացողութեան խօսքեր արտասանել: Մենք, հայ մասուրի աշխատա-ւորներ, միշտ պատրաստ ենք սեղմելու այդ ձեռքը՝ որ երկարվում է մեզ յանուն եղբայ-րութեան և խաղաղութեան: Բայց զիջաւորն այն է, որ այդ ձեռքը երկարած լինի մեզ ան-կեղծօրէն, առանց յետին մաքերի, որովհետեւ մենք հանդիսատես ենք եղել, և՛ յաճախ, ոչ միայն ձեռքի թունդ սեղմումների, այլ և սըը-տառուէ համբոյրների, որոնք, աւանդ, դարձել են միայն Յուդայի համբոյրներ...

Բայց երեկ «Հայեթ»-ը, և զիջաւորա-բար նրա երկրորդ խմբագիր Հիւսէյն Զա-դէն, ինչպէս ցոյց է տալիս «Հայեթ»-ի մի և նոյն համարում «Այսուհետեւ ինչ անենք» տիտղոսի տակ նրա տպված յօդուածը, վեր-ջապէս հնչած է համարում ժամը խօսել ան-կեղծօրէն:

Լաւ, խօսենք անկեղծօրէն: «Հայեթ»-ը հարցնում է հեգնօրէն, ուր են ձեր Արդուլաւ Զէվլէթները, «Ինչո՞ւ օտար երկրներում, հէնց նոյն ժընէվում երեսուն, բաւասուն» հայ Արդուլաւ Զէվլէթներից գո-

նէ մէկը Կովկասի հայերէն չուղղեց մի նման-
օրինակ կոչ:

Մենք զարմանում ենք, որ «Հայաստ»-ը հե-
ռուներէն է փնտրում այն, ինչ էր մօտէն է,
իր ընթերցողի մօտէն: Ինչու պահանջում է օտար
երկրներէն խաղաղութեան, եղբայրութեան
խօսքը, երբ այդ խօսքը արդէն հնչել է և չէ
դադարում հնչելուց բուն երկրում: Մեր Ար-
շակունի Ձեռնարկները վաղուց, եղբայրասպան
կուրի նոյն իսկ ամենատարբ քաղաքներում, հրա-
ւիրել են ամանակակա պաշտօնակաութիւնը
եղբայրութեան, խաղաղութեան, համերաշխու-
թեան, բարի դրացնութեան, բայց, աւանդ
այդ կոչը չէ լսել, ոչ միայն չէ լսել, այլ և
աւելին, նրա վրա թեւ է, նրան դարձել
են մինչև իսկ զէնք խաղաղութեան և եղբայ-
րութեան ըզձացող հայ ժողովուրդի դէմ:

Ինչպէս շուտ մոռացվում է այս այնքան թարմ
պատմութիւնը:

Տ. Ջաւէն

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻԺ

Սեպտեմբերի 17-ին

Ներկայումս հայերի և թուրքերի յարաբե-
րութիւնները նոյնն են, ինչ արանցի երկու
ամիս առաջ: Երկու ազգերը նայում են իրար
կուրի պատրաստվող քաղաքներին նման:
Թուրքերը շարունակ աշխատում են սարքովի
փաստերով և զգարտութիւններով յանցանք-
ներ թափել հայերի գլխին: Բայց չէ աշխուժում.
օրինակ, սեպտեմբերի 9-ին Ջաւէնի մօտ 4
վերստ դէպի հիւսիս արեւելք գտնվող «Ղարա-
լաղ» կոչված տեղում սպանւում են երկու
թուրքեր անյայտ անձանց ձեռքով (գուցէ
թուրքերի) և երբ 11-ին պրինց Նապօլէօն
Ջաւէնի ժամանեց, թուրքերը նրանցից մէկի
գլխով, որ ջահկեցի գերբիւրոյ էր, ներկայացնե-
լով բողոքում էին: Գետնէք թէ հայերի ֆիդա-
ները ինչ են անում, ի սէր Աստուծոյ մեզ մի
ճար... Դեռ ներքալ, հասկանալով բանի էութե-
թիւնը, առանձին ուշադրութիւն չը դարձրեց:

Բայց թուրքերը իսպառ մոռացել են, որ
իրանց կոտորած հայերի գերակները մինչև
այսօր էլ փառում են ջրհորներ և խանդակ-
ներ մէջ, որոնցից դեռ նոր-նոր գտնում են
ջահկեցի հայեր և թուրքեր:

Պրինց Նապօլէօն, շրջելով Նախիջևանի գա-
ւառը, առանց որ և է յայտնի կարգադրու-
թիւններ անելու, վերադարձաւ 12-ի գերիեր
Երևան: Նախիջևանում դարձեալ սպանւում է
մեծ քանակութեամբ զօրքի ժամանումը:

Գրուելի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աստաբանի հայոց թեմական առաջնորդը
տեղեկացրել է Կովկասի Փոխարքայի դիւա-
նին, որ իր թեմի Վարդեպետը, Պատրիարքի
և Ստաւրօպոլ քաղաքներում բացված են հա-
յոց եկեղեցական դպրոցներ:

Սեպտեմբերի 22-ին թիֆլիսի նահանգա-
պետը վերադարձրեց քաղաքապետի պաշտօ-
նակատար իշխան Չերքէզովին բոլոր հրաժար-
ված ձայնաւորներին հրաժարականները, առա-
ջադրելով նրանց յետ վերցնել այդ հրաժարա-
կանները և վերսկսել քաղաքային ինքնավա-
րութեան աշխատանքներն առաջվայ նման:
Հաւաքական հրաժարականն ստորագրող ձայ-
նաւորները երէկ երեկոյան ժողով գումարե-
ցին:—Չը պէտք է մոռանալ նաև այն բացվա-
խորհուրդ յայտարարութիւնը, որ արեց թիֆ-
լիսի նոր գեներալ-նահանգապետը. նա խոս-
տացաւ այսուհետ թոյլ տալ զուգորդի նիստե-
րը դուրսացնել թոյլտրութեան և այնպիսի մի-
ջոց ձեռք առնել, որ այլ ևս անհնար լինի
օգոստոսի 29-ի սրտաձմիւրի դէպքերի կրկնու-
թիւնը:

Կօրէկօի յանձնաժողովը, ասում է «Ի. Խ.»
լրագիրը, մտադիր է այնքան ձգձգել իր աշ-
խատանքները, որ Պետական Դուռնի բացվի
և յանձնաժողովի պատրաստի ծրագիրը յան-
ձնվի Պետական Դուռնի ընտրութեանը և ոչ
Պետական խորհրդին, որովհետև այդ վերջին
հիմնարկութիւնը, Կօրէկօի կարծիքով, չէ ըն-
դունելու իր առաջարկած ծրագիրն իբր աւելի
ազատամիտ:

Վերջին աղետից ցնամված հայերի օգտին
ստացանք Մ. Ճերմակեանից 20 բուրլի:

Լուրերին նայելով, ժողովրդական լուսա-
ւորութեան միջնադարութիւնը մտադիր է կար-
ծել յայտնել հրէաներին և լեւադներին սահ-
մանադրութիւնը. դեռ ինչպէս ասում են, կաթը
չէ չորացել նրա շրթունքները վրա և արդէն
այսպիսի մի անձան միջոց է սեղմում իր
կրօնը: Ինչու պահանջում է օտար
երկրներէն խաղաղութեան, եղբայրութեան
խօսքը, երբ այդ խօսքը արդէն հնչել է և չէ
դադարում հնչելուց բուն երկրում: Մեր Ար-
շակունի Ձեռնարկները վաղուց, եղբայրասպան
կուրի նոյն իսկ ամենատարբ քաղաքներում, հրա-
ւիրել են ամանակակա պաշտօնակաութիւնը
եղբայրութեան, խաղաղութեան, համերաշխու-
թեան, բարի դրացնութեան, բայց, աւանդ
այդ կոչը չէ լսել, ոչ միայն չէ լսել, այլ և
աւելին, նրա վրա թեւ է, նրան դարձել
են մինչև իսկ զէնք խաղաղութեան և եղբայ-
րութեան ըզձացող հայ ժողովուրդի դէմ:

մանաւանդ թուրք դպրոցներում ընդունելու
դէմ:

Թիֆլիսում հրատարակվող «Новое Обозр.»
լրագիրը խմբագիր Ք. Յով. Բալանթարեանը
դիմել է Կովկասի Փոխարքային և խնդրել, որ
իր լրագրի խմբագիր հաստատէ թիֆլիսի
հրաժարված քաղաքապետ Ք. Ա. Վերմի-
շանին, ազատելով իրան այդ պաշտօնից:

Ակմօլայի նահանգի զրդը հասարակու-
թեան ներկայացուցիչները Պետերբուրգ գնա-
լով, կոմս Սոլովեց խնդրել են, որ իր կարծի-
քը յայտնէ թէ զրդները ինչ կարծիքով
պէտք է մասնակցեն Պետական Դուռնային և
զրդը պատգամաւորներին ընտրութեան կեր-
պը ցոյց տալ: Մի և նոյն ներկայացուցիչները
մի երկար խնդրագիր են ներկայացրել կոմս
Իգնատիևիին՝ իսլամական կրօնի և դաւանու-
թեան հարցերի մասին, (որոնց քննութեան
յանձնաժողովի նախագահն է կոմս Իգնատիևի):
Ակմօլայի զրդները կառավարութիւնից խնդ-
րում են, որ իրանց իրաւունք տալ մի առան-
ձին մոնֆիթ ընտրելու: (Հայաթ)

«Новое Время» լրագիրը մի յօդուած է
գետնել Բազուի նաւթարդիւնաբերութեան
մասին: Հեղինակն այն եղբայրացութեան է դա-
լիս, որ նաւթի արդիւնաբերութիւնը պէտք է
կենտրոնացնել պետական գանձարանում, նոյն
իսկ այն մասը նաւթարդիւնաբերողներին ձեռ-
քով, որոնք այժմ ստանալի ճգնվում են նաւ-
թի արդիւնագործութիւնը մենավաճառութիւն
դարձնող խոշոր դրամատէրերից:

Ստացանք պ. Լևոն-Արամեանի հետեւեալ նոր
թարգմանութիւնները, տպւած թիֆլիսում. 1)
Վիկտորիէն Սարգս (Ուղեհարցութիւն), թա-
տերիքով թիֆլիս 3 արարուածով, 101 էրես,
գինը 50 կօպէկ. 2) Մ. Մասոս «Նապաստակ
Սէլանի» Վրէժիթիթիւնը, զրոյց պատկե-
րազարդ, 58 մեծադիր էրես՝ խոշոր տառե-
րով, գինը 75 կ., 3) Կոմ. Մուրիկա «Փոքրիկ
Յուրակ» և խլըշիկ նապաստակը, զրոյց պատ-
կերազարդ, 90 էրես, գինը 1 բուրլի, 4) Մ.
Սեմեկա—Առաջին վաստակ, զրոյց պատ-
կերազարդ, 60 էրես, գինը 60 կօպէկ:

Թիֆլիսի ստատիստիքական բւերօի կառա-
վարի իշխան Պ. Մ. Արդութեան—Երկայնա-
բազուկը քաղաքային ուղղութիւնի կողմից ու-
ղարկվեց Պետերբուրգ և Մոսկվա՝ ծանօթա-
նալու և ուսումնասիրելու, թէ ինչպէս է
կազմակերպված այդ քաղաքներում ստատիս-
տիկայի դրոշմ:

Վրաստանի էկզարխը կազմել էր մի յանձ-
նաժողով, որը պէտք է բնակիչային ենթա-
կէր մոմի գործարանի բոլոր հաշիւները:
Բայց էկզարխի կազմած այդ յանձնաժողովը
հրաժարվեց իր վրա ընդունել այդ պաշտօնից,
առաւելելով, որ այդ նոյն նպատակի համար
վրաց հոգևորականութիւնն արդէն ընտրել էր
մի յանձնաժողով:

Երևանի գեներալիս չուգեց յետ միայ Դեր-
բանի և թիֆլիսի բնակական դպրոցներէն
ուսանա վարձն աւելացնելու հարցում: Այդ
գեներալիս արդէն խնդր է ներկայացրել
Փոխարքայի դիւանին՝ թոյլատրելու ուսան
վարը 50 բուրլուց 54 բուրլու բարձրացնել,
որովհետև կարիք կայ բացանելու երկու զու-
գործաց դասարաններ, իսկ փող չը կայ.
պէտք է աւելացնել ուսան վարը, որպէս զի
կարելի լինի բաց անել այդ դասարանները:
Ուրեմն հարցը դրված է այսպէս. կամ բազ-
մաթիւ աշակերտներ պէտք է դուրսը մնան և
կամ բոլոր ծնողները—աղքատ թէ հարուստ—
պէտք է առանց այն էլ անադին ուսան վար-
քի վրա նորից 4 բուրլի աւելցնեն:

Դուռնի Ս. Ս. Պրոխանով խնդրամատոյց
է եղել Կովկասի Փոխարքային, որ իրան
թոյլատրվի թիֆլիսում ողոսելու լեզուով
հրատարակել «Духовный Христианин» անու-
նով մի ամսագիր նախնական ցնդուրային
ենթակա: Այդ ամսագիրը պէտք է նուրբված
լինի մօլօկանների հոգևոր և անտեսական
պէտքերին:

Դուռնային նահանգի գերազանց տարրա-
կան դպրոցների պահպանութեան համար նա-
հանգական վարչութիւնը խնդրում է 1400
բուրլի տարեկան: Շատ և շատ պարկեշտ է
նահանգական վարչութեան պահանջը. մի ամ-
բող Նահանգի գերազանց տարրական կըր-

թութեան համար միայն 1400 բուրլի է գործ
ածվում:

Մոսկվայից գրում են «Новостям» լրագրին, որ
սեպտեմբերի 18-ին Օրբոլով-Չուկոնով սկս-
վել է ընդհանուր գործադուլ: Լուրեր են
պատել, որ նոյն իսկ լուրը անկարգութիւն-
ներ են տեղի ունեցել: Այդ պատճառով կա-
ռավարութիւնն ուղարկել է այնտեղ երկու
հարիւրակ կօպէկ:

Պետերբուրգի կանանց բարեգործական ըն-
կերութիւնն ուղարկել է քաղաքային և զեմստ-
վային հաստատութիւններին շրջաբերական
թղթեր հարցնելով այդ հիմնարկութիւն
ներին, թէ ինչպէս կը վերաբերվեն նը-
րանք Պետական Դուռնայում կանանց ձայն
տալու հարցին: Ընկերութիւնն սկսել է, ասում
է «Нов.» լրագիրը, ստանալ այդ հիմնարկու-
թիւններից պատասխան, որոնցից երևում է,
որ ոչ միայն նրանք համակրում են այդ բա-
նին, այլ և պահանջում են, որ ընկերութիւնը
խիստ ազդեցիկ անէ այդ բանի օգտին և
որ իրանք կօչնեն ընկերութեանը:

Իրկուտսկի գեներալ-նահանգապետ Պ. Ի.
Բուրժայիսովը, ինչպէս հաղորդում է «Բ. Շ.»
լրագիրը, երկրորդ անգամ է դիմում անում
և պնդում, որ անհրաժեշտ է իր շրջանում
գտնվող բոլոր վարչական աքսորականներին
ընդհանուր ներում շնորհել:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են,
որ ներքին գործերի մինիստրութեան մէջ
արդէն վճռված է Կանադայի դուխօբներին
նորից Կովկասում բնակեցնելու հարցը: Այդ
նպատակով Կանադայի ուսանական միասնային
միջոցով դուխօբներին յայտնված է թէ ինչ
պայմաններով նրանք կարող են վերադառնալ
Կովկաս: 1) Նրանց խոստանում են ձեր տոմ-
սակ Ամերիկայից մինչև Կովկաս: 2) Նրանք
տալիս են 3 անգամ աւելի հող, քան առաջ
ունէին: 3) Նրանց խոստանում են դաւանու-
թեան լիակատար ազատութիւն:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրու-
թիւնը, ասում է «Слово» լրագիրը, մտադիր
է թոյլատրել բաց անելու Լեհական Թաղաւո-
րութեան երկրում այնպիսի դպրոցներ, որոնց
մէջ բոլոր աւարկանների դաստաւութիւնը լե-
հերէն է լեհերէն, բացի ողոս լեզուից, պատ-
մութիւնից և աշխարհագրութիւնից: Այդ դըպ-
րոցներին անտեսական և կրթական մասերի
հսկողութիւնը լինելու է Վարշավայի դպրո-
ցական շրջանի հոգաբարձուի իրաւասութեան
տակ: Ֆինանսների մինիստրութեան էլ աղը-
վում է նման իրաւունք առեւտրական դպրոց-
ներ բաց անելու համար: Իսկ եղած դպրոց-
ներում շուտով պէտք է մօցնվի լեհերէն լե-
զուն:

Ի Տէր հանգուցեալ մեղուականութեան «Կա-
տանցոյս» սրենքից մէկը, պ. Սեդրակ Մա-
դինեան չէ կարողանում մոռանալ «Մշակը»,
որ միշտ և հանապազ եղել է «Երեւելի ման-
կավարժի» համար այն կարծիք շուրջ, որի
տեսը միայն այնքան կատարողնում է ցու-
կերին: Մենք մի նկատութիւն ենք տեսել
«Արշալոյս» լրագրի մէջ երևան եկած մի կո-
պիտ հայհոյանքի մասին. «Արշալոյս» արդա-
բացրեց իրան նրանով, թէ դա սոցալական
մի սխալ էր: Հարցը, ուրեմն, սպառնում էր,
բայց ոչ մեր հիմնաւորը «Երեւելի մանկավարժի»
համար, որ և շատեղի է դուրս թուել հրապա-
րակ մեզ պատմելու համար: Մենք կարդա-
ցինք պ. Մանդինեանի նամակը և մի բան
հասկացանք, այն, որ ամբողջ աշխարհը կարող
է փոխվել մի քանի օրում, բայց մեղուական-
ութիւնը, մանաւանդ յանձին պ. Մանդի-
նեանի, կը մնայ իր հին, անշարժ ուղեղով:
Յայտնի է, որ ի Տէր հանգուցեալ մեղուական-
ութիւնը սիրում էր իր ամբողջ մտաւոր կա-
րողութիւնը թափել այն բառերի մէջ թէ
«Մշակը» մատնիչ է: Կարծում էինք, թէ եր-
կար ասելներ գոնէ ամենաթեթեւ կերպով
աղաղած կը լինէին այդ ապուշ ինքնագոհու-
թեան վրա: Սխալված էինք: Պ. Մանդինեանը
երկար տարիներից յետոյ ըստութիւն ձեռք
բերելով իր ամբողջ ստորագրութեամբ «Մշակի»
դէմ նետվելու, իր ձեռքն է առել նոյն հին,
թշուառ, հարկեր հազար անգամ ջարդված,
ժանգից կերված դէնքը: Ո՛րքան խղճալի մի-
թարութիւն: Վայելեցեք այդ միթարութիւնը,
պ. Մանդինեան, երբ այսօր էլ, ինչպէս միշտ,
դեռ ուրիշ բան չէք գտել ձեզ հանգստեցնելու
համար:—Շորհաւորում ենք «Արշալոյսի» խմ-

բազմութիւնը. դեռ ինչպէս ասում են, կաթը
չէ չորացել նրա շրթունքները վրա և արդէն
այսպիսի մի անձան միջոց է սեղմում իր
կրօնը: Ինչու պահանջում է օտար
երկրներէն խաղաղութեան, եղբայրութեան
խօսքը, երբ այդ խօսքը արդէն հնչել է և չէ
դադարում հնչելուց բուն երկրում: Մեր Ար-
շակունի Ձեռնարկները վաղուց, եղբայրասպան
կուրի նոյն իսկ ամենատարբ քաղաքներում, հրա-
ւիրել են ամանակակա պաշտօնակաութիւնը
եղբայրութեան, խաղաղութեան, համերաշխու-
թեան, բարի դրացնութեան, բայց, աւանդ
այդ կոչը չէ լսել, ոչ միայն չէ լսել, այլ և
աւելին, նրա վրա թեւ է, նրան դարձել
են մինչև իսկ զէնք խաղաղութեան և եղբայ-
րութեան ըզձացող հայ ժողովուրդի դէմ:

ԱՆԱԼՑԻՍՏԻՑ մեզ գրում են. «Կովկասում
զեմստվօ մօցնելու համար մեղանում էլ օգոս-
տոսի 20-ից մինչև 26-ը եղան թէ քաղաքա-
յին և թէ շրջակայ գիւղացիներ ուղարկածա-
տէրեր ընդհանուր ժողովները, որտեղ ընտր-
վեցին 20 ներկայացուցիչներ դաւանային
խորհրդակցութեանը մասնակցելու: Բաղաբիւ
կողմից ընտրվեցին պ. պ. Գր. Մովսէսեան
(քաղ. աւագ), քաղ. բժիշկ Յ. Այվազեան և
Գր. Բուրդուխան: Գաւառիս հարուստ կալուա-
ծատէրերից ընտրվեցին 6 հոգի՝ պ. պ. Բալբուր-
տեան, Գր. Չաթալաշեան, Լ. Փիլալեան,
Խ. Ասմարեան, Ռուստի բէկ Աւարով, և
Դ-բէկ-Տախտալայեզով, իսկ մանր կալուա-
ծատէրերից ընտրվեցին երկուսը՝ պ. պ. Ի.
Դոդալով և մոլլայ Մուրադ Մատաղով: Շրջա-
կայ 9 գիւղական շրջաններից 9 հոգի—պ. պ.
Գ. Տէր-Միլաշեան, Ա. Մաղոյեանց, Դ. մոլլայ
Ռանապօլի, Ի. Միրապով, Ս. Օմարօլի,
Մուրադ Ռաճապօլի, Տ. Չօղաճէ, Մ. Տօտօ-
պաճէ և Ալի-Գուպրիօլի: Ընդամենը 20 հո-
գի: Գաւառային խորհրդակցութիւնները սկս-
վեցին օգոստոսի 29-ից և տեղեցին մինչև
սեպտեմբերի 6-ը: Որքան տեղեկացանք, խոր-
հրդակցութիւնը յետիւլ է 1834 թ. կանօնա-
դրութեան վրա, մի քանի անհրաժեշտ փոփո-
խութիւններով: Գաւառական խորհուրդը իր
միջից ընտրել է 4 ներկայացուցիչ՝ նահանգա-
կան խորհրդին մասնակցելու համար: Ընտրվել
են բժիշկ Յ. Այվազեան, քաղ. աւագ Գր.
Մովսէսեան, Գ. Բուրդուխան և Մ. Տօտօպաճէ:
Իսկ Փոխարքայի դիւանին խորհրդակցութեանը
մասնակցելու համար ընտրվել է հաշտարար
միջնորդ Մուրադով: Այս վերջին ընտրու-
թեանը ներկայ չեն եղել անդամները 5 հոգի,
որի համար, որքան լսեցինք, նոր ընտրութիւն
է լինելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական «Ժուրնալ» լրագրի թղթա-
կիցը Բերլինում, խօսակցութիւն ունենալով
Վիտտէի հետ, վերջինս հետեւեալ կարծիքն է
յայտնել Եւրօպայի այժմեան քաղաքականու-
թեան մասին: «Այժմ կատարեալ շարժմատա-
յին խաղ է կատարվում մեծ պետութիւնների
մէջ և նոր համախմբումները անխուսափելի
են: Հարց է—մի արդիօք իր կողմը կը բաշ-
է: Դերմանիս կրկնակի խաղ է վարում: Նա
կամենում է պաշտօնական դաշն կապել Ռու-
սաստանի հետ, Ֆրանսիայի մասնակցութեամբ,
բայց ի՞նչ այդ կօմբինացիան չաղողվի, Դեր-
մանիս սիրալիր է պատրաստում. գերմա-
նական կարիքները պատրաստում է գերմանա-
թիւրքական դաշնակցութիւն: Կ. Պօլի գեր-
մանական դիւանին Բարոն Մարշալ արդէն մի
քանի տեսակցութիւն է ունեցել այդ մասին
Վիլհելմ կայսրի և կանցլեր Բիւլովի հետ: Ա-
ռաջ է ըլլում և մի ուրիշ կօմբինացիա—Դեր-
մանիս, Ռուսաստանի, Միացեալ-Նահանգա-
ների և Ֆրանսիայի դաշնակցութիւնը: Այդ
ծրագիրը շեղ կողմնակից ունի յանձին Վիտ-
տէի: Վերջապէս, մի երրորդ կօմբինացիա—
Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի
և Յունաստանի միջկերական դաշնակցու-
թիւնը:

—Նոյն լրագրի մէջ տպված է յայտնի արե-
ւելագետ Ալեքսանդր Ուլարի յօդուածը Զի-
նաստանի առաջիկայ քեթօմիների մասին: Մի
բարձրաստիճան պաշտօնեայ ասել է, թէ «Զի-
նաստանում կառավարութեան սահմանադրա-
կան եղանակ մօցնելը անհրաժեշտ կերպով
որոշված է»: Այդիկայսրէն և կայսրը բու-
րորովն համոզվեցին, որ մանդարինների բիւ-
րօկրատիան հնացել է և պէտք է տեղի տալ
հասարակական ինքնագործունէութեան կեն-
դանի ոյժերին:

—Պարբերից հեռագրում են ողոսաց լրագրի-
ներին, որ հաստատ աղբիւրից հաստատում
են, թէ ողոսական նոր փոխառութիւնը Պա-
րիզի բօրայում չի կայանայ, որովհետև գըլ-
խաւոր ընտրվեցին, որ մանդարինների բիւ-
րօկրատիան հնացել է և պէտք է տեղի տալ
հասարակական ինքնագործունէութեան կեն-
դանի ոյժերին:

графского Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.